ԱՐՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ՆՇԵԼ ԵՆ ԾՐԱԳՐԱՎՈՐՈՂԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐԸ

Սեպտեմբերի 13-ին ԱրՊՀ 50-ամյակի և ծրագրավորողի միջազգային օրվա առթիվ Արցախի պետական համալսարանի կիրառական մաթեմատիկայի և ինֆորմատիկայի ամբիոնի նախաձեռնությամբ կազմակերպվել է ինտելեկտուալ խաղ-մրցույթ: Մրցույթին մասնակցել են ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա, տեղեկատվական տեխնոլոգիաներ մասնագիտությունների տարբեր կուրսերի ուսանողներ:

Կիրառական մաթեմատիկայի և ինֆորմատիկայի ամբիոնի վարիչ, մ.գ.թ., դոցենտ Վազգեն Առստամյանը կարևորել է միջոցառման նշանակությունը՝ ընդգծելով, որ նման մրցույթները ուսանողներին իրենց ինտելեկտուալ ներուժը ցուցադրելու և փորձ ձեռք բերելու հնարավորություն են տալիս: «ԱրՊՀ տվյալ մասնագիտություններով ավարտած ուսանողները կարողանում են հանրապետության համապատասխան ոլորտներում լավագույնս կիրառել իրենց ստացած գիտելիքները»,- ասել է նա:

Ուսանողներին մասնագիտական օրվա կապակցությամբ շնորհավորել է ԱրՊՀ ՈՒՇՀՀՏԱ գծով պրոռեկտոր Վիտյա Յարամիշյանը՝ մաղթելով նրանց արագ յուրացնել մասնագիտական բոլոր նրբությունները և հեշտությամբ ինտեգրվել ՀՀ-ում և Արցախում տնտեսության առաջատար ճյուղերից մեկի՝ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտին:

«Ուսանողները հետաքրքրված են նմանատիպ մրցույթներով, ինչը նրանց ուսանողական կյանքին ներգրավելու հնարավորություն է տալիս, զարգացնում է ինտելեկտուալ կարողությունները, ինչպես նաև հետաքրքիր ժամանց է ապահովում»,- ասել է ուսանողուհի Արուս Ալավերդյանը:

Մրցույթի ավարտին հաղթող թիմերը պարգևատրվել են պատվոգրերով:

«ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԵՎ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ» ԹԵՄԱՅՈՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՐԿՕՐՅԱ ԴԱՍԸՆԹԱՑ ԱՐՊՀ-ՈՒՄ

Արցախի պետական համալսարանում հավատարմագրման գործընթացին նախապատրաստվելու նպատակով կրթական ծրագրերի պատասխանատուների հետ հանդիպել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող, պ.գ.թ., դոցենտ Լիլիթ Զաքարյանը:

Փորձագետը ներկաներին մասնագիտական խորհրդատվություն ցուցաբերելու համար քննարկել է բարելավման ուղղությամբ անելիքները, շուկայի այսօրվա պահանջների հետազոտումը, գնահատման քաղաքականությունը, ուսուցման ռազմավարությունը:

«Դասընթացի նպատակն է մասնագիտության կրթական ծրագրերի որակի ապահովման համակարգը ներկայացնել, թեմայի շուրջ քննարկումներ կատարել և նպաստել քննադատական մտածողության մթնոլորտի ստեղծմանը»,- ասել է Լիլիթ Զաքարյանը՝ հավելելով, որ այն կնպաստի նաև բուհի ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրմանը:

«ԱՐՑԱԽԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ամսաթերթ
Հիմնադիր՝ «ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊՈԱԿ
Հրատարակվում է 1994 թվականից
Խմբագիր՝ Զ. Սառաջյան
Մեր հասցեն՝ Մ.Գոշի 5:
Հեռ.՝ (047) 94 04 91
Տպաքանակ՝ 400
Տպագրվում է Արցախի պետական համալսարանի հրատարակչության տպարանում
Իմացի՛ր քո համալսարանի մասին:
Այցելի՛ր asu.am կայք:
www.asu.am

ԱՐՑԱԽԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՄՍԱԹԵՐԹ - ЕЖЕМЕСЯЧНАЯ ГАЗЕТА «АРЦАХИ АМАЛСАРАН»

№ 06(220)
սեպտեմբեր, 2019

ԱՐՊՀ ՌԵԿՏՈՐ ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ԳԻՏԵԼԻՔԻ ԵՎ ԴՊՐՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

Սիրելի՛ սովորողներ, ջերմորեն շնորհավորում եմ Գիտելիքի և դպրության տոնի առթիվ:

Ուսանողական կյանքը լավագույն ժամանակահատվածն է մասնագիտական գիտելիքների ձեռքբերման և հուսալի ապագայի հիմնաքարը դնելու համար: Մաղթում եմ, որ ձեր այդ ժամանակը կարողանաք արդյունավետ կառավարել՝ ուսանողական կյանքի ամեն մի օրը դարձնելով ձեր գիտելիքի, հմտությունների, կարողությունների պաշարն ընդլայնելու հնարավորություն:

Առանձնահատուկ շնորհավորում եմ առաջին կուրսեցիներին, ովքեր այս տարի դարձել են կեսդարյա պատմություն ունեցող Արցախի մայր բուհի ուսանողը: Վստահեցնում եմ ձեզ, որ Արցախի պետական համալսարանը, ունենալով լավագույն ավանդույթներ, շարժվում է նորարարությանը համընթաց, և համալսարանում լավագույնս է ներդրված նորի ու ավանդականի այն համադրությունը, որը միտված է բարձրորակ, ժամանակակից աշխատաշուկայում պահանջարկ ունեցող մասնագետ պատրաստելուն:

Սիրելի՛ համալսարանականներ, շնորհավորելով բոլորիս նոր ուսումնական մեկնարկի առթիվ, մաղթում եմ հաջողություններով լի ուսումնական տարի: Գիտելիք ստանալու անսպառ ցանկությունը թող միշտ ուղեկցի բոլորիդ:

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԹԻՎԸ ԱՅՍ ՏԱՐԻ ԿՐԿՆԱԿԻ ԱՎԵԼԱՑԵԼ Է

2019-2020 ուսումնական տարում Արցախի պետական համալսարան ընդունված ուսանողների թիվը կրկնակի ավելացել է՝ նախորդ տարվա համեմատ:

Այս մասին տեղեկացրել է ԱրՊՀ ընդունող հանձնաժողովի պատասխանատու քարտուղար Գոհար Գասպարյանը:

Ընթացիկ ուստարում ԱրՊՀ բակալավրիատ է ընդունվել 591 ուսանող, որից 450-ը՝ առկա, 141-ը՝ հեռակա ուսուցման համակարգ, իսկ նախորդ ուսումնական տարում՝ 245 ուսանող առկա և հեռակա ուսուցման համակարգերում:

Պատասխանատուի խոսքով՝ ամենաշատ դիմորդներ են գրանցվել «Անգլերեն լեզու և գրականություն», «Ֆինանսներ ըստ ոլորտի», «Հայոց լեզու և գրականություն», «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Ֆիզդաստիարակություն և սպորտային մարզումներ», «Իրավագիտություն» կրթական ծրագրերի գծով:

Ընդունվածների արդյունքներով առկա ուսուցման համակարգում առաջատար են «Ֆինանսներ ըստ ոլորտի», «Անգլերեն լեզու և գրականություն», «Իրավագիտություն», իսկ հեռակա ուսուցման համակարգում՝ «Հայոց լեզու և գրականություն», «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Իրավագիտություն» կրթական ծրագրերը:

Ամենաքիչ թվով խմբեր են ձևավորվել «Քիմիա», «Ֆիզիկա», «Հոգեբանություն», «Կենսաբանություն» կրթական ծրագրերով, իսկ «Քաղաքագիտություն» և «Հաշվապահական հաշվառում ըստ ոլորտի» կրթական ծրագրերով ընդհանրապես խմբեր չեն ձևավորվել:

Հավելենք, որ Արցախի պետական համալսարանի բակալավրիատում այս պահի դրությամբ սովորում է 2197 ուսանող, որից 1474-ը՝ առկա, 723-ը՝ հեռակա ուսուցման համակարգում:

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԺ-ՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԵԼ Է «ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ԴԱՍ»

Սեպտեմբերի 3-ին Արցախի մայր բուհի ուսանողության համար ԱՀ Ազգային ժողովի դահլիճում տեղի է ունեցել «Անկախության դաս», որը վարել է Ազգային ժողովի նախագահ Աշոտ Ղուլյանը: Ներկա էին ԱՀ ՊՆ, ՊԲ հրամանատար, գեներալ-մայոր Կարեն Աբրահամյանը, ԿԳՍ նախարար Նարինե Աղաբալյանը, ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանը, դասախոսներ:

Ողջունելով ներկաներին և շնորհավորելով ուսանողներին նոր ուսումնական տարվա, Արցախի Հանրապետության 28-րդ տարեդարձի առթիվ՝ ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանը նշել է, որ ավանդույթ է դարձել ԱրՊՀ-ում ամեն տարի նոր ուսումնականը մեկնարկել Ազգային ժողովի նախագահի կողմից անցկացվող «Անկախության դաս»-ով: Չխախտելով ավանդույթը՝ այս անգամ Ա. Ղուլյանը դասը վարել է ԱԺ-ում: Ռեկտորը շնորհակալություն է հայտնել խորհրդարանի ղեկավարին, նախարարներին՝ Արցախի մայր բուհը և ուսանողությանը մշտապես ուշադրության առանցքում պահելու համար և նրանց նվիրել խորհրդանշական գրքեր:

Ուսանողներին ողջունել և սեպտեմբերյան տոների առթիվ շնորհավորել է ԱՀ ՊՆ, ՊԲ հրամանատար, գեներալ-մայոր Կարեն Աբրահամյանը՝ հորդորելով ուսանողական տարիներն արդյունավետ օգտագործել և դառնալ լիարժեք մասնագետներ: Համառոտ ներկայացնելով ՊԲ-ում իրականացված աշխատանքները, որոնք միտված են բանակի մարտունակության բարձրացմանը, Կ. Աբրահամյանը վստահեցրել է, որ ներկայումս ռազմական վիճակը գնահատվում է հարաբերական կայուն, բայց սպառնալիքներ միշտ կան, որոնց պատրաստ է դիմակայելու պաշտպանության բանակը:

«Բոլորս պետք է ամեն ինչ անենք, որպեսզի կարողանանք պահպանել այն ամենը, որի համար իրենց կյանքն են տվել մեր տղաները: Արցախի անկախությունը ողջ հայության հպարտությունն է»,-նշել է նա:

Ողջույնի խոսքում ԿԳՍ նախարար Նարինե Աղաբալյանը ևս շնորհավորել է ուսանողներին՝ նշելով, որ մեր երկրի և Արցախի մայր բուհի համար հետաքրքիր մի շրջափուլ է թևակոխել, երբ բարեփոխումների և որակական զարգացման ակտիվ գործընթացներ են ակնկալվում՝ հատկանշելով բուհի հավատարմագրումն ու հանրապետությունում սպասվելիք գործընթացները:

«Մեր ամենաթանկ նվաճումը մեր անկախությունն է: Դուք պետք է կարողանաք այդ նվաճումը բազմապատկել և ամրապնդել նոր նվաճումներով: Մենք պետք է պայքարենք գիտելիքի համար, ոչ թե գիտելիք սպառելու, այլև ստեղծելու համար»,-նշել է ԿԳՍ նախարարը:

Ազգային ժողովի նախագահ Աշոտ Ղուլյանը հանդես է եկել ընդարձակ բանախոսությամբ՝ ներկայացնելով պատմաքաղաքական այն առանցքային իրադարձությունները, որոնք տեղի են ունեցել Արցախի Հանրապետությունում՝ ստեղծման օրից մինչ օրս: Շնորհավորելով ուսանողությանը սեպտեմբերյան տոների առթիվ՝ խորհրդարանի ղեկավարը կարևորել է երիտասարդության ներուժը համապետական նշանակության գործընթացներում՝ հիշեցնելով 1988-ին Արցախյան շարժմանը առաջամարտիկ դարձած ուսանողության ունեցած դերն ու նշանակությունը:

Ընդգծելով միասնականության ու ներքին համերաշխության անհրաժեշտությունը՝ Ա. Ղուլյանը մասնավորապես նշել է.«Միասնության շնորհիվ է, որ մենք ունեցանք հաղթանակ: Գնահատենք այն գինը, որի շնորհիվ ունեցանք անկախ հանրապետություն: Անկախությունը արժեք է, որը ոչ բոլոր ազգերն ունեն: Արցախյան ազգային-ազատագրական պայքարն այն քննությունն էր, որը մենք պատվով հանձնեցինք և ունեցանք անկախ, ինքնիշխան Արցախի Հանրապետություն»:

ՌԴ ՆՈՎՈՍԻԲԻՐՍԿԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՄԲԻՈՆԻ ՊՐՈՖԵՍՈՐԸ ՀԱՆԴԻՊԵԼ Է ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆՆԵՐԻ ՀԵՏ

«Արցախի երիտասարդ գիտնականների և մասնագետների միավորում» հասարակական կազմակերպության կողմից Ստեփանակերտում կազմակերպված «Հայոց պետականության անցյալը, ներկան ու ապագան» խորագրով 4-րդ միջազգային երիտասարդական գիտաժողովի մասնակից, ՌԴ Նովոսիբիրսկի պետական համալսարանի միջազգային իրավունքի ամբիոնի վարիչ, ի.գ.դ., պրոֆեսոր Վլադիսլավ Լեոնիդովիչ Տոլստիխը ԱրՊՀ-ում հանդիպել է համալսարանականների հետ:

Հանդիպման ընթացքում նա խոսել է դարաբաղյան հակամարտության, չճանաչված պետությունների հիմնախնդիրների, միջազգային-իրավական կարգավիճակի, տարածաշրջանային զարգացումների մասին:

Բանախոսը, անդրադառնալով Արցախին, առանձնացրել է համացանցում Արցախի մասին օտարալեզու տեղեկատվության քիչ լինելու խնդիրը: Հանդիպման ընթացքում պրոֆեսորը պատասխանել է նաև ներկաների հարցերին:

ԱՐՊՀ ՌԵԿՏՈՐԸ ՀԱՆԴԻՊԵԼ Է ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՐԱԾ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ

Արցախի պետական համալսարանի ռեկտոր Արմեն Սարգսյանը հանդիպել է CONIFA-ի առաջնության և Համահայկական 7-րդ խաղերի ընթացքում կամավորական աշխատանք իրականացրած ուսանողների հետ: Ռեկտորը համալսարանի ղեկավարության անունից շնորհակալություն է հայտնել նրանց՝ կատարած կարևոր ու պատասխանատու աշխատանքի համար՝ նշելով, որ կամավորական շարժումը աշխարհում տարածված երևույթ է, հատկապես ուսանողության շրջանում:

«ԱրՊՀ կամավորական շարժումը ավանդույթի ուժ է ստանում: Մինչ այդ եղել էր Շուշիի «Շող» կենտրոնը, Վերականգնողական կենտրոնը, CONIFA-ի ժամանակ կազմակերպվել են պատմաճարտարապետական հուշարձանների շրջակայքի մաքրման աշխատանքներ»,-իր գոհունակությունն է հայտնել ռեկտորը ուսանողներին:

Արմեն Սարգսյանը առաջարկել է կամավորական աշխատանքներում ներառել նաև հանրակրթական դպրոցները, որոշ դպրոցների բարձր դասարանների աշակերտներին, նրանց համար կազմակերպել օլիմպիադաներ, էքսկուրսիաներ, ինչը կնպաստի նաև բուհ-դպրոց կապի ամրապնդմանը:

Հանդիպման ընթացքում ռեկտորը քննարկել է ուսումնական գործընթացում ուսանողներին հուզող խնդիրները՝ պատասխանելով նրանց հարցերին:

ԱՐՊՀ Է ԱՅՑԵԼԵԼ ՖՐԵԶՆՈՅԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉԸ

Արցախի պետական համալսարանի ռեկտոր Արմեն Սարգսյանն ընդունել է Ֆրեզնոյի պետական համալսարանի (ԱՄՆ) հայագիտության ամբիոնի վարիչ, հայկական ուսումնասիրությունների ծրագրի ղեկավար, դոկտոր, պրոֆեսոր Բառլոու Տեր-Մկրտչյանին:

Ռեկտորը շնորհակալություն է հայտնել Բառլոու Տեր-Մկրտչյանին Արցախի մայր բուհ այցելելու համար՝ կարևորելով նրա ներդրումը հայագիտության ոլորտում:

Հանդիպմանը քննարկվել են ուսումնագիտական գործունեության, հայագիտական ծրագրերին և համագործակցությանն առնչվող հարցեր:

ՌՈՒՍ ԳՐՈՂ, ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍ ՊԱՎԵԼ ՆՈՒՅԿԻՆԸ ԱՐՊՀ-ՈՒՄ ՀԱՆԴԵՍ Է ԵԿԵԼ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅԱՄԲ

Սեպտեմբերի 30-ին Արցախի պետական համալսարանում ռուս գրող, հրապարակախոս, գրականագետ Պավել Նույկինը հանդես է եկել դասախոսությամբ: Նախքան հանդիպման մեկնարկը՝ ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանը ընդունել է Պավել Նույկինին՝ շնորհակալություն հայտնելով նրան՝ համալսարան այցելելու և դասախոսությամբ հանդես գալու համար:

Դասախոսությանը մասնակցում էին բանասիրական ֆակուլտետի ռուսաց լեզվի և գրականության ամբիոնի դասախոսներ, ասպիրանտներ, ուսանողներ: Դասախոսության թեման էր «20-րդ դարի երկրորդ կեսի և ժամանակակից ռուս գրականությունը»: Նա մանրամասն ներկայացրել է տվյալ ժամանակաշրջանի ռուս գրականության զարգացումը, վերլուծել մի շարք արժեքավոր գրական ստեղծագործություններ և ֆիլմեր:

Նշենք, որ Պավել Նույկինը գրող, հրապարակախոս, «Ղարաբաղ» կոմիտեի հիմնադիրներից Անդրեյ Նույկինի որդին է: Ա. Նույկինը նշանակալի ավանդ է ունեցել Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի օբյեկտիվ ու արդարացի լուսաբանման և Ադրբեջանի կողմից մարդու իրավունքների կոպիտ խախտման փաստերն աշխարհին ներկայացնելու գործում:

Դասընթացը տևելու է մեկ շաբաթ:

ԱՆԿԱԽ ՓՈՐՁԱԳԵՏ ԹՈՆԻ ԲԱՍԸ ՀԱՆԴԻՊԵԼ Է ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ

Նախկին դիվանագետ, անկախ փորձագետ և տարբեր մասնագիտացումների գծով վերապատրաստման մասնագետ Թոնի Բասը Արցախի պետական համալսարանում հանդես է եկել դասախոսությամբ, որին մասնակցել են բանասիրական ֆակուլտետի «Թարգմանչական գործ», «Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտությամբ սովորող ուսանողները:

Նախքան հանդիպման մեկնարկը՝ ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանը ընդունել է Թոնի Բասին և շնորհակալություն հայտնել համալսարանում դասախոսությամբ հանդես գալու համար: Թոնի Բասը հանդես է եկել դասախոսություններով՝ «Հաղորդակցության հմտություններ (միջմշակութային հաղորդակցություն, PR և մեդիա, մամուլի հաղորդագրությունների կազմում, հաղորդակցում ճգնաժամերը կարգավորելու ժամանակ, լոբբինգ)» և «Բանակցային հմտություններ» թեմաներով:

Փորձագետը ուսանողների հետ քննարկել է մշակութային կողմնորոշման տարրերը, մշակութային տարբերությունների գնահատումը:

Ուսանողները պահանջված և կարևոր են համարել դասախոսությունը՝ ընդգծելով, որ այն հնարավորություն է ընձեռել իրենց գիտելիքներն ավելի խորացնելու քննարկման առանցք դարձած թեմաներից: Դասախոսությունն ուղեկցվել է քննարկումներով:

Նշենք, որ Թոնի Բասն իռլանդացի է, նախկին դիվանագետ և մի քանի պետական գերատեսչությունների նախկին պաշտոնյա, որն այժմ բնակվում է Հոլանդիայում և տարբեր երկրներում հանդես է գալիս որպես անկախ փորձագետ և վերապատրաստման մասնագետ հետևյալ մասնագիտությունների գծով. ԵՄ ինտեգրում, ԵՄ պատմություն և նորանոր զարգացումներ, ԵՄ որոշումների կայացման համակարգեր, բանակցային հմտություններ, հաղորդակցության հմտություններ, հանրային կառավարման բարեփոխումներ, արդյունավետ կառավարման համակարգեր, ռազմավարության մշակում, անձնակազմի կառավարում, BREXIT և այլն: Թոնի Բասը նաև Եվրոպայի քոլեջի և Քլինգենդալի միջազգային հարաբերությունների ինստիտուտի հրավիրյալ դասախոս է և անկախ խորհրդատու: ՀՀ ԱԳՆ դիվանագիտական դպրոցում Թ. Բասը «Հաղորդակցության հմտություններ» է դասավանդում 2014 թվականից:

«ՄԵՆՔ ԵՆՔ, ՄԵՐ ՍԱՐԵՐԸ» ՀՈՒՇԱԿՈԹՈՂԻ ՄՈՏ ԿԱՅԱՑԵԼ Է ԱՐՊՀ ԱՌԱՋԻՆ ԿՈՒՐՍԵՑԻՆԵՐԻ ԵՐԴՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Սեպտեմբերի 26-ին «Մենք ենք, մեր սարերը» հուշակոթողի մոտ կայացել է Արցախի պետական համալսարանի առաջին կուրսերի ուսանողների երդման արարողությունը: Միջոցառմանը ներկա էին ԱՀ պետնախարար Գրիգորի Մարտիրոսյանը, ԱԳ նախարար Մասիս Մայիլյանը, ԿԳՍ նախարար Նարինե Աղաբալյանը, ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանը, Ազգային վիճակագրական ծառայության նախագահ, ԱրՊՀ նախկին ռեկտոր Մանուշ Մինասյանը, համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմը, ուսանողներ:



Միջոցառումը մեկնարկել է ԱրՊՀ զոհված ուսանող-ազատամարտիկների հիշատակը հավերժացնող հուշակոթողին ծաղիկներ խոնարհելով: Երդման տեքստն ընթերցելու պատիվը վերապահվել է բանասիրական ֆակուլտետի ուսանողուհի Ասպրամ Ավանեսյանին: Ուսանողները երդվել են հարուստ գիտելիքներ ձեռքբերելու ճանապարհին չընկրկել դժվարությունների առջև, մաքառել գիտության բարձունքները նվաճելու համար, վառ պահել հանուն անկախության նահատակված հայորդիների հիշատակը, հավատարիմ մնալ նրանց վեհ ու անմահ գաղափարներին, պատվով և պատասխանատվությամբ շարունակել նրանց կիսատ թողած գործը, հարգանքի խորին զգացումով համակվել դեպի դասախոսական կազմը՝ որպես կրթության և գիտության նվիրյալների, սիրել և սրբությամբ պահպանել հայրենի երկրի զարգացման և բարգավաճման ուղին բռնած մայր բուհը՝ ԱրՊՀ-ն:

Ուսանողներին շնորհավորել և ողջույնի խոսք է ասել ԱՀ պետնախարարը՝ վստահ լինելով, որ նրանց տված երդումը կյանքի կարևորագույն ճանապարհի անցման ուղենիշ է՝ ուղեկցված գիտակցված մասնագիտության ընտրությամբ, ինչպես նաև Արցախի Հանրապետությանը ծառայելու նվիրումով:

ԿԳՍ նախարարը արարողության վայրը խորհրդանշական և հետաքրքիր է համարել: «Մեծ պատվին զուգահեռ նաև մեծ պատասխանատվություն ունեք պահել, պահպանել, զարգացնել ու հզորացնել մեր երկիրը»,- ասել է Նարինե Աղաբալյանը՝ ընդգծելով, որ նրանք լավ մասնագետներ պիտի դառնան և համալրեն Արցախի Հանրապետության տարբեր ոլորտների լավագույն մասնագետների շարքերը:

Ուսանողներին շնորհավորել է նաև ԱրՊՀ նախկին ռեկտոր Մանուշ Մինասյանը՝ մաղթելով ուսումնառության ամբողջ ընթացքում սովորել և երբեք չբավարարվել ձեռքբերածով:

ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանը, շնորհավորելով ուսանողներին, նշել է, որ առաջին կուրսեցիների երդման արարողությունը ավանդույթի ուժ է ստացել:

«ԱրՊՀ-ն Արցախի մայր բուհն է, որը արդեն 50 տարի կրթում է սերունդ, ԱՀ տարբեր բնագավառների համար տալիս է բարձրորակ մասնագետներ»,- ասել է ռեկտորը՝ համոզմունք հայտնելով, որ Արցախը մոտ ապագայում դառնալու է ճանաչված աշխարհի կողմից:

Շնորհավորանքի և բարեմաղթանքի խոսքերից հետո ընդունելության քննություններում ամենաբարձր միավորներ վաստակած առաջին կուրսեցիները պատիվ են ունեցել ուսանողական տոմսեր և ստուգման գրքույկներ ստանալ ԱրՊՀ ռեկտորի և բարձրաստիճան պաշտոնյաների ձեռքից:

ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻՆ ԵՎՍ ՀԱԳԵՑԱԾ ԿԼԻՆԻ ՀԵՏԱՔՐՔԻՐ ԾՐԱԳՐԵՐՈՎ

2018-2019 ուսումնական տարին հագեցած էր տարաբնույթ հետաքրքիր միջոցառումներով, որոնք ուղղված են եղել ուսանողների ինքնակազմակերպմանը, նրանց իրավունքների պաշտպանությանը, գիտելիքների ամրապնդմանը: ԱրՊՀ ՈՒՇՀՀՏԱ գծով պրոռեկտոր Վիտյա Յարամիշյանի խոսքով՝ տարին սկսվել է կառուցվածքային փոփոխություններով. համալսարանում առաջին անգամ սկսել են գործել ուսումնական գործընթացի կազմակերպման և վերահսկման բաժինները, ուսանողները սկսել են կրթաթոշակ ստանալ բանկային պլաստիկ քարտերով:

Աշխատանքներ են իրականացվել բուհ-գործատու կապերի ամրապնդման ուղղությամբ: «Այդ շրջանակում բազում միջոցառումներ են իրականացվել, որոնց նպատակը եղել է ինչպես մեր շրջանավարտների ներգրավումը տնտեսության մեջ, այնպես էլ տնտեսության շահագրգռվածության և կապերի ամրապնդումը»: Բազմաթիվ քննարկումներ, ծրագրային փոփոխություններ են իրականացվել, որոնք միտված են եղել ուսանողների մասնագիտական ունակությունների կատարելագործմանը և մրցունակության բարձրացմանը:

Ուսանողական ամառը ևս հագեցած էր համապետական միջազգային նշանակության միջոցառումներով, որին ակտիվ մասնակցել են ուսանողները: «Ամեն տարի ամառը սկսվում է Հանրապետության նախագահի կողմից բուհը գերազանց ավարտած շրջանավարտների դիպլոմների հանձնումով և պարգևատրմամբ: Հատկապես կարևոր էր ուսանողների ներգրավումը CONIFA ֆուտբոլային առաջնությանը և համահայկական ամառային խաղերին, քանի որ դա նպաստել է կամավորական խմբերի ձևավորմանը»,- ասել է Վիտյա Յարամիշյանը՝ առանձնացնելով նաև ավանդույթ դարձած ամառային միջազգային ճամբարները և դրանց շրջանակում կազմակերպած տարաբնույթ հագեցած միջոցառումները: Խոսելով առաջիկա անելիքներից՝ Վիտյա Յարամիշյանը նշել է, որ տարին ուսանողների համար հիշարժան դարձնելու նպատակով բազմաթիվ միջոցառումներ են նախատեսվում. «Այս տարի լրանում է ԱրՊՀ 50-ամյակը, ինչի առթիվ նախատեսում ենք հրապարակել համալսարանի ողջ պատմությունը ամփոփող եռալեզու գիրք-ալբոմ, կազմակերպել համապետական նշանակություն ունեցող միջոցառումներ, ուսանողական միջազգային գիտաժողովներ»:

ԱՐՊՀ-ՈՒՄ ԿԱՅԱՑԵԼ Է «ՍՓԻՒՌՔԱՀԱՅ ԿԵԱՆՔԵՐ՝ ԻՆՉՊԷՍ ՈՐ ՏԵՍԱՅ» ԳՐՔԻ ՇՆՈՐՀԱՆԴԵՍԸ

Արցախի պետական համալսարանում կայացել է Արաբական ծոցի երկրների Աստվածաշնչյան ընկերության ընդհանուր քարտուղար, լիբանանահայ գրող, հրապարակագիր Հրայր Ճեպեճյանի «Սփիւռքահայ կեանքեր՝ ինչպէս որ տեսայ» գրքի շնորհանդեսը: ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանը, ողջունելով ներկաներին և շնորհավորելով հեղինակին, նշել է, որ Հրայր Ճեպեճյանը առաջին հերթին մեծ հայ է, այնուհետև՝ գիտնական, աստվածաբան և գրող:

Գրող, լրագրող Միքայել Հաջյանը, շնորհակալություն հայտնելով համալսարանի ռեկտորին, պրոֆեսորադասախոսական անձնակազմին, հյուրերին ջերմ ընդունելության համար, ներկայացրել է գրողի կյանքն ու ազգային, հասարակական, միջեկեղեցական, գրական գործունեությունը:

Գիրքը արժևորել և գնահատանքի խոսք է ասել բանասիրական ֆակուլտետի գրականության և լրագրության ամբիոնի դասախոս, բ.գ.թ. Զարինե Սառաջյանը՝ ընդգծելով, որ գրքի առանցքում սփյուռքահայ մարդու կյանքն է՝ իր խոհերով, տագնապներով, կարոտի ու նահանջի երգերով: «Գիրքը հավասարապես հետաքրքիր է թե՛ հայ, թե՛ օտարազգի ընթերցողի համար, քանի որ պատմական

ճակատագրի բերումով սփյուռքահայերը բազում թելերով շաղկապված են աշխարհի հազարավոր քաղաքների բնակիչների հետ»,- ասել է նա՝ մանրամասնելով, որ գիրքը հագեցած է ժամանակակից սփյուռքի առջև ծառացած խնդիրներով ու տագնապներով, որոնցից առաջնահերթը հայապահպանությունն է ու նրա կարևորագույն երաշխիքներից մեկը՝ հայոց լեզվի պահպանումը:

Գրքի հեղինակը շնորհակալություն է հայտնել ներկաներին՝ ջերմ ընդունելության և գրքի շնորհանդես-քննարկումը կազմակերպելու համար:

ՔՆՆԱՐԿՎԵԼ ԵՆ ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ԵՎ ԱՐՊՀ-Ի ՄԻՋԵՎ ՓՈԽԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՄԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՐՑԵՐ

Սեպտեմբերի 27-ին ԱրՊՀ ռեկտորը ընդունել է Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի գիտքարտուղար, պ.գ.թ. Վահե Թորոսյանին, Մատենադարանի ավագ գիտաշ-խատող Թամարա Մինասյանին և «Մատենա-դարան-Գանձասար» գիտամշակութային կենտրոնի տնօրեն Արամ Թորոսյանին:



Հանդիպմանը քննարկվել են հայագիտության զարգացմանը և փոխգործակցության ամրապնդմանը վերաբերող հարցեր, նախանշվել Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի և Արցախի մայր բուհի միջև հետագա համագործակցության ուղղությունները, որոնք, ըստ նախնական պայմանավորվածության, կլինեն համատեղ միջոցառումների, գիտաժողովների կազմակերպում, Մատենադարանի մասնագետների կողմից բուհում դասախոսությունների անցկացում, փորձուսուցման շրջանակում ԱրՊՀ ուսանողների այցելություն Մատենադարան և այլն:

«Մեր մասնագետները սիրով կարող են գործուղվել Արցախ, հանդես գալ դասախոսությունների շարքով»,- նշել է Վահե Թորոսյանը՝ հավելելով, որ բանասիրության ուղղությամբ Մատենադարանի մասնագետները կարող են նպաստել բուհի ուսումնագիտական կյանքի արդյունավետության բարձրացմանը:

Վ. Թորոսյանը պատրաստակամություն հայտնեց նաև փոխգործակցության մի ուղղությունն էլ դարձնել Մատենադարանի մայր կառույցի գրադարանային ֆոնդը, ինչը մեծապես կնպաստի բուհի պրոֆեսորադասախոսական և ուսանողական կազմին՝ հատկապես գիտահետազոտական ուսումնասիրությունների դեպքում:

ԱրՊՀ ռեկտորը շնորհակալություն է հայտնել նրանց Արցախի մայր բուհ այցելելու համար և հույս հայտնել, որ երկու կառույցների փոխգործակցության ամրապնդումը կնպաստի Արցախում կրթության և գիտության զարգացմանը:

ԱՐՊՀ-ՈՒՄ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅԱՄԲ ՀԱՆԴԵՍ Է ԵԿԵԼ ԿՈՎԿԱՍԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՏՆՕՐԵՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆԸ

Սեպտեմբերի 12-ին ԱրՊՀ է այցելել և դասախոսությամբ հանդես եկել Կովկասի ինստիտուտի տնօրեն, քաղաքագետ, վերլուծաբան Ալեքսանդր Իսկանդարյանը: «Ժողովրդավարություն և նրա տեսակները» թեմայով դասախոսությանը ներկա էին ԱրՊՀ դասախոսներ, ուսանողներ:

Ողջունելով բանախոսին և ներկաներին՝ ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանը շնորհակալություն է հայտնել Ալեքսանդր Իսկանդարյանին՝ ընդգծելով Կովկասի ինստիտուտի հետ ԱրՊՀ-ի ակտիվ համագործակցության նշանակությունը՝ ուսումնագիտական արդյունավետության տեսանկյունից:

«Կովկասի ինստիտուտի գործունեությունը բոլորիս քաջ ծանոթ է և ներկայացնելու կարիք չկա: Կարևորելով նրա դերը ԱրՊՀ-ում՝ հարկ է շեշտել, որ յուրաքանչյուր տարի Կովկասի ինստիտուտը ԱրՊՀ-ում հանդես է գալիս նոր ծրագրերով, որոնց արդյունավետությունն ակներև է»,-մասնավորապես ասել է ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանը:

«Ժողովրդավարության թեման այսօր հետաքրքրում է ամբողջ աշխարհին և անչափ արդիական է: Ամեն անգամ Արցախ այցելելով՝ աշխատում եմ Արցախի ուսանողության համար դասախոսությամբ հանդես գալ, և դա ես համարում եմ իմ պարտքը: Անհրաժեշտ է, որ ուսանողները գիտելիքներ ունենան ժողովրդավարության մասին, իմանան, թե ինչ սկզբունքներ ունի ժողովրդավարությունը, ինչպես է առաջացել և ինչ զարգացումներ է ապրել»,-թեմայի արդիականության մասին ասել է Ա. Իսկանդարյանը՝ հատկանշելով ՀՀ-ում և Արցախում տեղի ունեցած վերջին զարգացումները՝ կապված տեղի ունեցած և ունենալիք ընտրական գործընթացների հետ:

Կովկասի ինստիտուտի տնօրենը, խոսելով ժողովրդավարության ֆենոմենի մասին, կարևորել է հատկապես նրա կոմպետենտ լինելու անհրաժեշտությունը:

Բանախոսը պատասխանել է նաև ուսանողների հարցերին, որոնք վերաբերում էին ժողովրդավարությանը, ներքաղաքական, տարածաշրջանային զարգացումներին: